

Ազր. 25ին կը գրէ Սինոզի հաշուարար Գրիգոր վրդ. Յովբեանցի որ նոյն տոմսակը փութայ վանք զրկելու, ստանալու համար նոյն կտակեալ գումարին տոկոսը. 1859ին տոմսակը կը զրկուի եւ պտրքը կուտայ ստացապիրը (տե՛ս *sksr ընդօրինակութեան Յովհ. պտրք.ի*):

Կ

ԿԱՏԱՐԻՆԷ ԽՕՁԱՄԱԼԵԱՆ, ԿԱԼԿԱԹԱՅԻ.— 1796ին իր ամբողջ հարստութիւնը կը կտակէ Ազգ. հաստատութիւններուն, տասը բաժիններով, որոնցմէ մին կը պատկանի Ս. Յակոբի վանքին: 1803ին Կատարինէ կը վախճանի Բուսորի մէջ և կտակատար եղբայրը Աղա Իլիաս Մինասը կտակին օրինաւորութիւնը հաստատել կուտայ: Իլիաս Մինասի մահուանէն վերջ կտակակատարի պաշտօնը կը շարունակէ որդին Յովհաննանը (✳ 1860), յետոյ անոր այրին Վառվառէ Էլիսազ կսկսի գործադրել Կատարինէի կտակը, (Լումայ, 1904):

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԲԵՊՍ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՍՊԵՏՐԻ.— (Տոնիկի եւ ձեռնադրուս ընկանիքի սերած). Աշկ. Ակնայ Առ. Միքայէլ արքեպս.ի, որուն ձեռքով 1788ին Պոլիս կը զրկուի ուսումը կատարելագործելու համար, 1795ին կը դառնայ Ակն. Չռ. 1801ին, Առ. Ակնայ և Էրզրումի 1808 ին. եպս. կը ձեռնադրուի 1811ին. Ռուսաց և Տաճկաց պատերազմին հետեանքով 1828ին, Կարապետ արքեպս. 90,000 հայ ժողովուրդին հետ 1830ին կը գաղթէ Ռուսաստան և հայ գաղթականները նեղութիւններով կը հաստատուին Ախալցխա և Ախալքալաք: 1837-47 Առ. Վրաստանի և Իմէրէթի. կը վախճանի 1856ին: Կարապետ արքեպս. կարևոր նուիրատուութիւններ ւրած է Ս. Յակոբի վանքին եւ Օրինոքեան Կոնդակներ ստացած է Յովհաննէս պատրիարքէն: 1856ին կը շինէ իր կտակագիրը, որուն առջին յօդուածը հետեւեալն է. «արքեպիսկոպոսական տունն իմ որ յարեմուտս Ս. Փրկիչ եկեղեցւոյ Ախալցխոյ ընծայեմ Սրբոց Աթոռոց Էջմիածնի եւ Երուսաղէմի, այնպէս զի տարեկան արդիւնք նորին հաւասարազափ ստացին այն երկու Սուրբ Աթոռք», տեսնել Յովակիմ Գեղամեանցի գրած Կարապետ արքեպիսկոպոսի կենսագրութիւնը խորագրով յօդուածաշարքը (Փորձ, 1876, էջ 162-206. 1877, էջ 81-112):